ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 մարտի 2020 թվականի N 106 -Ա

«ՈՒՅԾԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության 2020թվականի մարտի 19-ի «Մեղադրյալ Արմիկ Էդիկի Նիկողոսյանի պաշտոնավարությունը ժամանակավոր դադարեցնելու մասին» որոշումը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. 2020 թվականի մարտի 24-ից ժամանակավոր դադարեցնել «Ույծի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արմիկ Նիկողոսյանի պաշտոնավարությունը՝ մինչև քրեական գործով վերջնական որոշման կայացումը:

2.Ա.Նիկողոսյանի պաշտոնավարության ժամանակավոր դադարեցման ժամանակահատվածում տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն ՊՈԱԿ-ի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Սուրեն Վարդանյանին:

Հիմք՝ մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ. Գանդալյանի զեկուցագիրը:

23.03.2020

X

ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN HUNAN 4005640117

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Հ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2020թ. մարտի 23
ք. Կապան